ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը, ստորև ներկայացնում է իր կարիքների համար փոստային ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՄՊՀ-ՄԱԾՁԲ-24/6 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 26.01.2024թ.-ին կնքված ՄՊՀ-ՄԱԾՁԲ-24/6 պայմանագրում 27.06.2024թ. կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության պատճառ: Սկզբնական պայմանագրում չներառված, սակայն օբյեկտիվորեն չնախատեսված հանգամանքներից ելնելով պայամնագրի գնի տաս տոկոսի չափով ավելացում:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրի 3-րդ գլխի 3-րդ կետի «1 950 000 (մեկ միլիոն ինը հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ» բառերը փոխարինվել են 2 145 000 (երկու միլիոն մեկ հարյուր քառասունհինգ» բառերով:

Փոփոխության հիմնավորում: «Գնումների մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «բ» ենթակետ և Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 526-Ն որոշման թիվ 1 հավելվածով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ մասի 2-րդ կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Ք. Հակոբջանյանին:

Հեռախոս՝ 060 830 840

Էլ. փոստ՝ cpcarmenia@asteam.am

Այլ անհրաժեշտ տեղեկություններ՝ չկան:

Պատվիրատու՝ Մրցակցության պաշտպանության հանձնաժողով